Պիլիպպոս սկսաւ յամի Տեառն ՉԴ. Ինքնակալեալ ամս Ա. և կէս: Սա զպատկերն իւր եդ 'ի վերայ դրամից և առաքեաց 'ի Հռոմ, բայց ոչ ընկալան: Եւ նա ոխացեալ քակեաց զամենայն պատկերս եկեղեցեաց, և փախեաւ 'ի Սիծիլիա և անդ կայր:

Անաստասիոս սկսաւ յամի Տեառն ՉԵ. ինքնակալեալ ամս երեք: Սա առաքեալ կալաւ զՊիլիպ և եհան զաչսն. և զի յոյժ չար գոլով՝ զօրքն ընկեցին զԹէոդոս 'ի կայսրութենէ, և նա գնացեալ եմուտ 'ի վանս, և եղեալ քահանայ՝ անդէն մեռաւ:

Թէոդոս երրորդ սկսաւ յամի Տեառն ՉԸ. ինքնակալեալ ամս մի: Եւ անկեալ յիշխանութենէն և գնացեալ 'ի վանս՝ եղև կղերիկոս, և զմնացեալ աւուրս իւր խաղաղութեամբ անցոյց:

Լեոն սկսաւ յամի Տեառն ՉԹ. ինքնակալեալ ամս ԻԵ: Յաւուրս սորա եկին Սարակինոսքն, և երեք ամ նեղեցին

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան